ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Վերին Գետաշեն համայնքի ղեկավարին՝

1) ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով պահպանել ավագանու նիստերի գումարման, ոչ ուշ քան 2 ամիս մեկ անգամ, պարբերականությունը.
2) որոշումներով կամ կարգադրություններով հաստատվող հաստիքացուցակներում պահպանել համայնքային ծառայողների պաշտոնների անվանումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված անվանացանկի.
3) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ նշել, որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ ակտը՝ հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները.
4) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթներով պահպանել իրավական տեխնիկայի կանոնները.
5) իրավական ակտերի փոփոխությունները կամ լրացումները իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.
6) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պետական գրանցման <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.
7) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով չեղյալ համարել համայնքի ղեկավարի 2009թ. մարտի 25-ի N 6 և 2009թ. հունիսի 4-ի N 18 որոշումները.
8) աշխատակազմի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը համալրել մրցութային եղանակով կամ էլ համայնքի ավագանու նիստում քննության առնել այդ պաշտոնի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում թողնելու նպատակահարմարության հարցը.
9) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ մասի և 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով մշակել, հաստատել և պետական գրանցում

ստանալուց հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկումների ոլորտի գործունեության համայնքային կանոնները.

10) ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը /սահմանելով ընդունելությունների ժամկետները/.
11) հաշվապահական հաշվառումը իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
12) վարել համայնքային ծառայողների անձնական գործերի գրանցամատյան.
13) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ